«ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Շինարարական աշխատանքների կազմակերպում

Գիրք 4

Ծրագրի առաջադրանք՝ ՀՀԱՄԿՀ-ԳՀԾԶԲ-22/34

Լիցենզիա՝ № 16994

«ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՌԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

## Շինարարական աշխատանքների կազմակերպում

Գիրք 4

Ծրագրի առաջադրանք՝ ՀՀԱՄՎՀ-ԳՀԾՁԲ-22/34

Լիցենզիա՝ № 16994

Պատվիրատու՝ Վեդու համայնքապետարան

Տնօրեն Հ. Եսայան

Երևան 2023 թ.

## Շինարարական աշխատանքների կազմակերպում
## Ընդհանուր դրույթները

Տվյալ շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցման շինարարական աշխատանքների համար:

ՇԿՆ-ն մշակված է ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում», ՇՆևԿ 1.04.03-85 <<Շինարարության տևողության նորմերը>>, ՇՆևԿ III-4-80 <<Անվտանգությունը շինարարության մեջ>> նորմերին համապատասխան:

Մինչ շինարարական-մոնտաժային աշխատանքների սկսելը, պետք է անցկացվի անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական նախապատրաստական աշխատանքները, որի կազմը և փուլերը ընդունված են ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» ձեռնարկին համապատասխան:

Իրականացվող շինարարական աշխատանքների ամբողջ համալիրը բաժանվում է երեք ժամանակահատվածների (փուլերի):

1. ***<u>Նախապատրաստական փուլ, որի ընթացքում ծրագրվում է՝</u>***

ա. Ժամանակավոր շինությունների տեղադրում, որոնք նախատեսված են ապահովելու շինարարության սանիտարա-կենցաղային, պահեստավորման և արտադրության հետ կապված հարցեր:

բ. Տարածքի առանձնացում, որպես արտադրական և բաց պահեստային տարածքներ:

գ. Շին.մոնտաժային մեխանիզմներ, ամբարձիչ, տրանսպորտային միջոցների և գործիքների առաքումը շին. հրապարակ:

դ. Շին. հրապարակի լուսավորման ապահովում:

2. ***<u>Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման փուլ.</u>***

*I. Հողային աշխատանքներ*

- տարածքի նշահարում
- տարածքի հարթեցում,
- հիմքերի փորում,

*2. Շին. մոնտաժային աշխատանքներ*

- հիմքերի կառուցում,
-կարկասի կառուցում
- պատերի կառուցում,
- միջհարկային ծածկի կառուցում,
- ծածկի կառուցում,
- տանիքի կառուցում
- դռների, պատուհանների, վերնափեղկերի տեղադրում,
- պատերի և միջնորմների, տեղադրում
- հատակների տեղադրում
- աստիճանների կառուցում
- և այլն

*3.Հարդարման աշխատանքների իրականացման փուլ*

- պատերի և առաստաղների գաջե սվաղում,
-արտաքին պատերի ցեմենտավազե սվաղ,
- արտաքին պատերի երեսապատում,

- հատակների իրականացում
-կախովի առաստաղների իրականացում
- մուտքերի աստիճանների տեղադրում բետոնե հիմքի վրա
- մուտքերի աստիճանների երեսապատում բազալտե սալիկով
-շենքերի եզրագծով որմնախարիսխի երեսապատում բազալտե սալերով

*4.Բարեկարգման աշխատանքների իրականացման փուլ:*
- ասֆալտե ճանապարհի կառուցում, բազալտե եզրաքարերով
-սալվածքի կառուցում բազալտե սալերի կտորտանքներով,
-խաղահրապարակների կառուցում,
- տարածքի բարեկարգում, ցանկապատում:

*5. Գազամատակարարում*
Միացում միջին ճնշման գազատարին:

*6. Ջերմատեխնիկական աշխատանքներ*
Ելնելով ջերմային պահանջարկից նախատեսվում է տեղադրել 2 հատ <<տուրբո>> պատի կաթսաներ յուրաքանչյուրը 32 կվտ հզորությամբ:
Նախատեսվում է փակուղային ջեռուցման համակարգ: Ջեռուցման համակարգում բոլոր խողովակները նախատեսվում են պոլիպրոպենային:

*7. Օդափոխություն*
Նախատեսվում է օդի բնական և արհեստական արտածում՝ սահ.հանգույցներից կենտրոնախույս և առանցքային օդափոխիչների միջոցով, իսկ խոհանոցում բնական օդափոխության միջոցով, օդատարը տանելով տանիք: Նկուղ ապաստարանում նախատեսված է ավտոնոմ օդափոխության համակարգ: Օդի ներածումը իրականացվում է հարկի առաստաղի տակ տեղադրված ներածման ագրեգատներով, ագրեգատները համալրված են օդափոխիչով էլեկտրական տաքացուցիչով օդի մաքրման ֆիլտրերով, աղմկախլացուցիչով, ժամանակի ռելեով կարգավորիչ փականներով: Օդի տաքացումը և կարգավորումը ավտոմատ է և ծրագրավորվում է գործարանում: Օդափոխիչների խափանման դեպքում համակարգը կարելի է աշխատացնել ձեռքի օդամուղներով:

*8. Տաք ջրամատակարարում*
Նախատեսվում է արևային պանելներով տաք ջրամատակարարման իրականացնել մանկական խմբերում՝ տեղադրելով 300լ տարողության ջերմափոխանակիչ:

*9. Ջրամատակարարում և Ջրահեռացում*
Ջրամատակարարումն իրականացվում է 110մմ տրամագծով պոլիէթիլենային ջրագծից: Կեղտաջրերը մաքրվում են մաքրման կայանում և ինքնահոս հեռացվում դեպի ե/բ հոր:

*10. Էլեկտրամատակարարում*
380/220վ լարման ցանցի միջոցով, լուսավորությունը՝ 220 վ լուսավորություն պղնձե ճկուն մեկուսացված լարերով:

ИНТЭРЭНЕРГИЯ
ԻՆՏԵՐԷՆԵՐԳԻԱ
01847856
INTERENERGIA

## Շին. հրապարակի կազմակերպում
## Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընդունված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 2-ում:

**Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը**

Աղյուսակ 2

| հ/հ | Անվանումը | Մակնիշը | Քանակը |
|---|---|---|---|
| 1. | <<Բելառուս>> տիպի էքսկավատոր | | 1 |
| 2. | Ինքնագնաց ավտոամբարձիչ | „Клинцы„ КС-35719-1-02 | 1 |
| 3. | Շարժական կոմպրեսոր | ЗИФ-55В | 1 |
| 4. | Հետհար մուրճ | МО-10 | 1 |
| 5. | Գույքային կաղապարամած | Կոմպլ. | 4 |
| 5. | Թրթռիչ խորքային էլեկտրական | ИВ-102А | 1 |
| 6. | Փոխարկիչ թրթռիչների համար | ИВ-4 | 1 |
| 7. | Եռակցման տրանսֆորմատոր | ТД-500 | 1 |
| 9. | Դակիչ ձեռքի էլեկտրական | ИЭ-4709А | 2 |
| 10 | Ձեռքի էլեկտրական դուր | ИЭ-1208А | 2 |
| 11. | Բեռնատար ավտոմեքենա | | 1 |

## Շին.մոնտաժային աշխատանքների որակի հսկում

Շին.մոնտաժային աշխատանքների բարձր որակն ու հուսալիությունն ապահովվում է շինարարական-մոնտաժային աշխատանքների արտադրական հսկման միջոցով, որն իրենից ներկայացնում է շինարարական արտադրանքի բոլոր փուլերում իրականացվող տեխնիկական, տնտեսագիտական և կազմակերպչական միջոցառումների համալիր:

Շին.մոնտաժային աշխատանքների որակի հսկումը ներառում է.

ա. շինվածքների, նյութերի և սարքավորումների աշխատանքային փաստաթղթերի մուտքային հսկումը,

բ. արտադրական օպերացիաների և առանձին պրոցեսների օպերացիոն հսկումը

գ. շին.մոնտաժային աշխատանքների ընդունման հսկումը:

Շինարարական արտադրության որակի ապահովման համակարգը ընդգրկում է նաև որակի տեխնիկական հսկումը, որն իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 746 և 752 հոդվածների հիման վրա:

Մուտքային հսկմամբ ստուգվում է աշխատանքային փաստաթղթերի լիակազմությունը, տեղեկատվական անհրաժեշտ ծավալը, շինարարական կոնստրուկցիաների, շինվածքների, իրերի, նյութերի և սարքավորումների արտաքին տեսքը և համապատասխանությունը ստանդարտներին, նորմատիվային և աշխատանքային փաստաթղթերին, անձնագրերի, սերտիֆիկատների և այլ ուղեկցող փաստաթղթերի առկայությունը:

Գործնոյթային հսկման նպատակն է թերությունների բացահայտումը շինարարության ընթացքում և դրանց վերացման կամ կանխման միջոցառումների սահմանումը:

Գործնութային հսկումը ենթադրում է շինարարական և մոնտաժային պրոցեսների տեխնոլոգիայի պահպանման, նախագծային փաստաթղթերին, նորմերին, կանոններին համապատասխանության ապահովման միջոցառումները:

Գործնութային հսկումը իրականացվում է տեխնոլոգիական քարտերի կազմում առկա որակի օպերացիոն հսկման սխեմաների և նորմատիվային փաստաթղթերի հիման վրա:

Գործնութային հսկման սխեմաները պետք է ընդգրկեն կոնստրուկցիաների ուրվագծերը (էսքիզները) չափսերի և թույլատրելի շեղումների նշմամբ, որոշ դեպքերում երկրաբանական (գեոդեզական) ծառայության կամ շինարարական լաբորատորիայի կողմից հսկվող օպերացիաների և պրոցեսների ցանկը, ինչպես նաև հսկման կազմի, ժամկետների և եղանակների վերաբերյալ տվյալները:

**Աշխատանքների անվտանգության հարցեր և հակահրդեհային միջոցառումներ**

Մինչ հողային աշխատանքների կատարելը, այն տեղերում որտեղ գործում են գոյություն ունեցող կոմունիկացիոն գծերը, անհրաժեշտ է աշխատանքները համաձայնեցնել համապատասխան կոմունիկացիաների շահագործող կազմակերպությունների և աշխատանքների անվտանգության պայմանները ապահովող միջոցառումների հետ:

Հողային աշխատանքները գործող ներքին կոմունիկացիոն ցանցի շրջանում, անհրաժեշտ է իրականացնել աշղեկի ղեկավարությամբ, իսկ գործող մալուխի տեղանքում՝ էլեկտրացանցի աշխատողների հսկողությամբ:

Մինչ հողային աշխատանքների սկսելը, պետք է անհրաժեշտության դեպքում ցանցերից անջատել ջրամատակարարումը և ձեռնարկել միջոցներ նրանց պահպանման համար:

Հակահրդեհային անվտանգությունը շին.հրապարակում, աշխատանքի տեղամասերում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան պահանջները <<Հակահրդեհային անվտանգության կանոններ>> շին. մոնտաժային աշխատանքների իրականացման համար և <<Հակահրդեհային անվտանգության կանոններ>> եռակցման և այլ աշխատանքների իրականացման համար համաձայն ՀՀ-ում գործող նորմերի:

Էներգիայի անվտանգությունը շին.հրապարակում, աշխատանքի տեղամասերում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան պահանջներ հաստատված Պետստանդարտ 12.1.013-78-ի կողմից:

Շին. հրապարակը, աշխատանքի տեղամասերը, աշխատատեղերը և անցումները օրվա մութ ժամերին պետք է լուսավորված լինեն համապատասխան Հրահանգի շին. հրապարակի էլեկտրալուսավորման նախագծի: Լուսավորումը պետք է լինի հավասարաչափ և լուսավորող սարքավորումների ազդեցությունը լինի ոչ կուրացնող: Չլուսավորված տեղերում աշխատանքի իրականացումը արգելվում է:

Մինչ աշխատանքի սկսելը աշխատողներին պետք է ծանոթացնել անվտանգության կանոնների հետ: Շին. աշխատանքները բարձր տեղերում կատարել օգտագործելով փայտյա խարաչուներ և հոսանքահարվելուց խուսափելու համար կառույցը նախօրոք մասնակի հոսանքազերծել: Այդ նպատակով բոլոր գործիքները և սարքավորումները անհրաժեշտ է, որ լավ մեկուսացված լինեն: Հաղորդալարերի անցկացումը իրականացնել մեկուսիչներով: Հոսանքահատիչ տեղավորել հատուկ փակ արկղի մեջ:

Աշխատանքի ժամանակ մեխանիզմներից և սարքավորումներից օգտվելիս հետևեալ օգտագործման հրահանգին:

Մեխանիզմների աշխատանքը ստուգել գործարկումից առաջ պարապ վիճակում:

Մեխանիզմների մաքրումը, յուղումը, նորոգումը և բացումը գործարկման ժամանակ արգելվում է: Արգելվում է ինչպես նաև անսարք վիճակում աշխատացնել:

Անցքերի բացումը թույլատրվում է կատարել օգտվելով փայտյա լաստակներից:

Շին.հրապարակի բոլոր աշխատողները, պետք է ապահոված լինեն պաշտպանիչ գլխարկներով, փոշուց պաշտպանվող ակնոցներով, շորերով և շնչադիմակով:

Նյութերը և գործիքները լաստակի վրա տեղաբաշխել հավասարաչափ: Ներքին հարդարման աշխատանքները իրականացնել միայն գույքային լաստակների միջոցով: Արգելվում է դնովի աստիճանի, պատահական հենարանի, պատուհանագոգի կամ կենցաղային գույքի միջոցով իրականացնել բարձրադիրք աշխատանքներ:

Կտուրի աշխատանքների իրականացման և այն տեղերում, որտեղ չկա մետաղական սահմանափակող ցանցեր՝ ապահովել աշխատողի անվտանգությունը պահպանիչ գոտիներով, որոնք պետք է ամրացնել կոնստրուկցիայի ճշտված ու հուսալի էլեմենտից:

Աքցան և հատիչ օգտագործելիս բռնել այնպես, որ կողային մասը ձեռքից դուրս մնա 2 սմ-ից ոչ ավելի:

Անցքերի բացումը թույլատրվում է կատարել օգտագործելով միայն փայտյա լաստակներ, որի լայնությունը պետք է լինի 1 մ բարձրությամբ ճաղաշարով՝ վերևից փայտյա բռնաձողով:

Եռակցման աշխատանքները իրականացնելիս հետևել հետևյալ պահանջներին՝ էլեկտրա և գազաեռակցման սարքերը անհրաժեշտ է, որ գտնվեն ճանապարհից և անցումներից մի կողմ, էլեկտրաեռակցվող նյութը պետք է լինեն հողակցված:

Եռակցման կարերի մաքրման ժամանակ անհրաժեշտ է անպայման օգտագործել պաշտպանող ակնոցներ: Կալցիի կարբիտի թմբուկը կարելի է բացել միայն կայծ չարձակող գործիքի՝ լատունից հատիչի միջոցով: Գազագեներատորի լիցքավորումը և կալյումի կարբիդի մնացորդի բեռնաթափումը կատարել ռետինե ձեռնոցներով:

Խտացված գազով բալոնը տեղափոխել միայն հատուկ պատգարակի միջոցով: Չի կարելի բալոնին մոտենալ կրակով, զոդիչով, անհերարկիչ հրածորանով: Արգելվում է գազագեներատորի մոտակայքում ծխել՝ տարածությունը 10 մետրից ոչ պակաս:

Շին. մոնտաժային աշխատանքները թույլատրվում է իրականացնել միայն աշխատանքների արտադրության նախագծի ծանուցումից հետո՝ որում պետք է մշակված լինի անվտանգության և հակահրդեհային բոլոր միջոցառումները: Այդ նախագիծը պետք է համաձայնեցնել շին. կազմակերպության անվտանգության ծառայությունների հետ:

Շինարարական աշխատանքների հերթականությունը ըստ <<Շինարարական աշխատանքների ժամանակացույցի>>:

## Գոռավան բնակավայրի մանկապարտեզի կառուցում
## Շինմոնտաժային աշխատանքների ժամանակացույց

| NN ը/կ | Աշխատանքների անվանումը | ժամկետը օրերով (340 օր) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 40 օր | | | | 50 օր | | | | | 60 օր | | | | | | 40 օր | | | | 50 օր | | | | | 20 օր | | 20 օր | | 40 օր | | | | 20 օր | |
| | | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 1 | Հողային աշխատանքներ | — | — | — | — | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Հիմքերի կառուցում | | | | — | — | — | — | — | — | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Կարկասի և պատերի կառուցում | | | | | | | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | | | | | | | | |
| 4 | Ծածկերի կառուցում | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | | | | | | | |
| 5 | Տանիքի կառուցում | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | | | | | | | | | | |
| 6 | Դռների և պատուհանների տեղադրում | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | | | | | | | |
| 7 | Հատակներ | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | | | | | | | | |
| 8 | Էլ. մոնտաժային աշխատանքներ | | | | | | | | | | | | | | — | — | — | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | Ջրամատակարարում և կոյուղի | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Ջեռուցում և օդափոխություն | | | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | | | | | | |
| 11 | Հարդարման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — | — | — | — | — | — | | |
| 12 | Արտաքին ինժեներական ցանցեր | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | | | | | |
| 13 | Բարեկարգման աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | — | — | — | — | — |

«Ինտերէներգիա» ՍՊԸ
նախագծի գլ. ինժ.

Գ. Եսայան